«Կրթություն առանց սահմանի»ՀԿ

ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՎԱՐՈՒՄ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Խումբ՝աշխարհագրություն,պատմություն

Պատասխանատու՝մ.գ.թ.,դոցենտ՝Սիմա Դայան

Կատարող՝Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոցի

Աշխարհագրության ուսուցչուհի՝Անահիտ Մխիթարյան

Երևան 2023-2024 ուստարի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. ՀՊՉ-ով սահմանված կարողունակությունները՝կրթության բովանդակության համատեքստում
3. Ուսումնառության նախագծային մեթոդ,դերն ու նշանակությունը
4. Նախագծային աշխատանքների առանցքն ու հիմքը
5. Նախագծերի կազմումն ու վարումը՝ուսուցչի ստեղծագործական և հետազոտական աշխատանքի ընթացքում
6. Եզրակացություններ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Ապագայի անգրագետը չի լինի այն մարդը,

ով չի կարող կարդալ:

Դա կլինի այն մարդը, ով չգիտի,

թե ինչպես պետք է սովորել>>:

Ալվին Թոֆլեր

Կրթությունն առաջադիմության, մշակույթի պահպանման, զարգացման անհրաժեշտ պայմանն է, իսկ կրթվելն անհատի զարգացման գործընթացն է՝ միտված գիտելիքների, հմտությունների տիրապետմանը, արժեքային վերաբերմունքի ձևավորմանը: Այն սոցիալական նշանակություն ունեցող փորձը նախորդ սերունդներից հաջորդին փոխանցելու՝ հանրորեն կազմակերպվող ու կարգավորվող, ինչպես նաև անհատի կայացման կենսաբանասոցիալական մշտական գործընթաց է[1] [1 ,էջ 22], որի արդյունքն անհատի ձևավորումն է: Այն անձի ձևավորման ու զարգացման, իմացական գործունեության եղանակների տիրապետման, գիտելիքների հաղորդման, կարողությունների ու հմտությունների մշակման, անցյալի փորձի յուրացման գործընթաց է: Կրթությունը որոնում է սոցիալական խթանման, առաջնորդության և վերահսկողության միջոցով զարգացնելու երեխայի բնական հզորությունները, որպեսզի նրանք կարողանան և

[1] Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար / Բնօրինակի անվանումը՝ Reference Framework of Competences for Democratic Culture – Volume 3 (ISBN 978-92-871-8575-4) (Եռահատոր շարք)՝ Եվրոպայի խորհրդի հրատարակչություն,165 էջ, էջ 6-7/

տրամադրվեն առողջ, երջանիկ և բարոյական արժանի կյանք վարելու համար[2] [2, էջ 6-7]:

Այս առումով,ՀՀ կրթական համակարգն ու ուսումնական հաստատությունները պետք է աշակերտներին պատրաստեն որպես ակտիվ, հաղորդակից և պատասխանատու անհատներ, որպեսզի մեր երեխաները զինվեն այնպիսի արժեքներով, վերաբերմունքով, հմտություն-ներով, գիտելիքով ու քննադատական մտածողությամբ, որոնք կնպաստեն ապագայում պատասխանատու որոշումներ կայացնելուն:

Սա նշանակում է, որ սովորողները պետք է իմանան և հասկանան իրենց առջև ծառացած մարտահրավերները և իրենց որոշումների հետևանքները:Այս ամենի համար նրանց անհրաժեշտ է ոչ միայն գիտելիք, այլ նաև համապատասխան կարողունակություններ (կոմպետենցիաներ), արժեքներ, վերաբերմունք, հմտություններ, գիտելիք ու քննադատական ընկալում, որոնք անհատին անհրաժեշտ են հասարակական կյանքին ակտիվ մասնակցության համար:

[2] Հանրակրթության պետական չափորոշիչ-Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ https://www.arlis.am/images/ARLIS/

2.ՀՊՉ-ՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Սովորողները կարող են այս կարողունակությունները ձեռք բերել ինֆորմալ /ցկյանս կրթությամբ՝ ըստ իրենց կենսափորձի/ և այն հասարակության փորձառության միջոցով, որտեղ ապրում են: Դրանք նաև կարելի է սովորել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության միջոցով՝ ուսուցչի աջակցությամբ: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և

բխում են հանրակրթության հիմնական նպատակներից[3] [3]: Այս պարագայում ուսուցիչներից ակնկալվում է համակարգված և սկզբունքային եղանակով սովորելու հնարավորությունների ընձեռում,և այն կրթական վերջնարդյունքները, որոնց սովորողը պետք է հասնի, հետևանք են կարողունակությունների և դրանց համապատասխանող վարքագծերի ձևավորման:

Կարողունակությունների (կոմպետենցիաներ) վրա հիմնված կրթական ծրագրի /ուսումնական պլանի/ կենտրոնում ուսումնառությունն ու սովորողն են՝ գիտակարգային կամ կոնկրետ առարկայական կարողու-նակությունների և/կամ միջառարկայական կարողունակությունների

[3] Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները ՀՀ 2015թ. փոփոխություններով սահմանադրության համատեքստում, Ա. Վաղարշյան՝ Կրթության իրավունքի սահմանադրական և օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները Երևան,Իրավունք 2016,էջ 22

/կիրառմամբ: Կարողունակությունների դիտարկումը <<ինչ է կարողանում անել սովորողը>> տեսանկյունից, թույլ է տալիս կիրառել մի մոտեցում, որի առանցքը սովորողների արդյունքներն են: Այս մոտեցման մեջ կարողունակությունները (արժեքներ, վերաբերմունքներ, հմտություններ, գիտելիք ու քննադատական ընկալում) համարվում են փոխկապակցված: Կոմպետենտ գործելու համար անձը գործի է դնում տվյալ իրավիճակին համապատասխան արժեքներ, վերաբերմունք, հմտություններ, գիտելիք ու քննադատական ընկալում, օրինակ՝ որևէ երևույթ մեկնաբանելու, որևէ հիմնախնդիր վերլուծելու և լուծելու կամ այլընտրանքային լուծումներ առաջարկելու նպատակով:

3.ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴ,ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կարողունակությունների ապահովման առումով խիստ արդիական է և կիրառելի ուսումնառության նախագծային մեթոդը, որը նպատակ ունի խնդրի (տեխնոլոգիաների) մանրամասն մշակման միջոցով հասնել դիդակտիկ նպատակին, որն էլ պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով: Այսպիսի կրթական գործընթացի կենտրոնում սովորողն է՝ իր ան-հատական ունակություններով, հետաքրքրություններով: Ուսուցիչն ընդամենը կազմակերպում է իր գործունեությունը՝ կենտրոնանալով աշակերտի քննադատական մտածողության ձևավորման և զարգացման վրա, ինչը ենթադրում է ոչ թե պատրաստի գիտելիքների յուրացում ,այլ ուսումնասիրվող երևույթի ուսումնասիրություն տարբեր տեսանկյուններից, ինքնուրույն եզրահանգումներ, որոնք հիմնավորված են առկա գիտելիքներով՝ հիմնված սեփական և ուրիշների փորձի

վրա [4][4,էջ14]: Այն սովորողների որոշակի գործողությունների հաջորդա-կանությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով:

Նախագծային մեթոդը հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն է: Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր,

[4] Ջոն Լարմեն ‹‹Gold Standard PBL: Essential Project Design Elements, Buck Institute for Education 2015, 4pages ,p.2

ինչը ենթադրում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմ-նորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Նախագծերի մեթոդը հատկապես կարևորվում է ժամանակակից տեղեկատվական հասարակությունում, քանզի այն համարվում է <<սրտով կատարված ծրագիր>>[5] [5,էջ 5]:

Նախագծերի հիմնական նպատակը նույնպես տարբեր կարողու-նակությունների՝ անձնային համալիր առանձնահատկությունների ձևավորումն է, գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակ-ցումը, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացումն ու կիրառելու պատրաստակամության ձևավորումը:

Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ որոնողական, կառավարման, շնորհանդեսների պատրաստման, ներկայացման կարողությունների և հմտությունների ձևավորման գործում:

Ըստ Ջոն Լարմենի <<Նախագծային ուսուցումը ուսուցման մի մեթոդ է, որի իրականացման ընթացքում սովորողները ներգրավվում են կարճաժամկետ (մինչև մեկ շաբաթ) կամ երկարաժամկետ (մինչև մեկ կիսամյակ) նախագծային աշխատանքներում, որոնք պահանջում են ուսումնական տարբեր առարկաներին առնչվող և իրական կյանքում հանդիպող խնդիրների համալիր լուծումներ>>[6] [6,էջ 2]:

Նա տվել է ոչ միայն դպրոցական ուսումնական նախագծի գիտական բնորոշումը,այլ նաև նախագծով ուսանելու ոսկե չափորոշիչը, ուսումնական նախագծի հիմնական տարրերը,նախագծերի անհրաժեշտ



[5] Современные педагогические и информационные технологии в сист
Учебное пособие / Е. С. Полат , М. Ю. Бухаркина, — М.: Издательский
2010, 17с ., стр.14

[6] Kilpatric W.H. `THE PROJECT METHOD Eleventh Impression March, 1929, Copyright 1918, by TEACHERS COLLEGE, COLUMBIA UNIVERSITY,17 pages,p.5

բաղադրիչների մանրամասն նկարագիրը, որոնցով առաջնորդվելով՝ ուսուցիչները կարող են վստահ լինել, որ գիտականորեն հիմնավորված ուսումնական լուրջ նախագիծ են իրականացնում:

4.ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՑՔՆ ՈՒ ՀԻՄՔԸ

Նախագծային աշխատանքների առանցքն անձի զարգացումն է ուսումնական առարկայի միջոցներով, հիմքը՝ ուսուցիչ-աշակերտ գործունեության միասնականությունը:

Նախագծերի որակական յուրօրինակությունը որոշվում է նրանց նպատակներով ու բովանդակությամբ, անցկացման մեթոդիկայով, ուսուցչի վարպետությամբ: Նախագծի կառուցվածքը պետք է արտացոլի ուսուցչի և աշակերտների համատեղ գործունեության կազմակերպման և՛ արտաքին դրսևորումները, և՛ ներքին պրոցեսների էությունը, որոնց հետ կապված է աշակերտների ակտիվ իմացական գործունեությունը: Նախագծերին բնորոշ է այնպիսի տարրերի փոխկապակցվածությունը, ինչպես օրինակ՝ ուսումնական նոր նյութի յուրացման ու նրա գործնական կիրառման հետ կապված նախկինում ուսումնասիրվածի յուրացումը, համադրումը, կրկնությունը, ամրակայումը, վերահսկողությունը:

Նախագծերի իրականացումը վերջնարդյունքներին հասցնելու նպատակին ծառայեցնելու համար խիստ կարևոր է մանկավարժական աշխատանքը գիտականորեն կազմակերպել՝ ընտրելով գործունեության օպտիմալ տարբերակ, որը ենթադրում է նախագծի գիտականորեն հիմնավորված պլանավորում, նորմավորում, գործառույթների հստակ բաշխում, ուժերի կոորդինացում, անհրաժեշտ պայմանների ստեղծում, օպերատիվ խթանում, մանկավարժական աշխատանքի հեռանկարայնություն: Նախագծի իրականացման օպտիմալ տարբերակի ընտրությունը պահանջում է մանկավարժական մտածողության պրոբլեմային-որոնողական ոճ, որի դեպքում ուսուցիչն ընտրում է տվյալ իրադրության համար հնարավոր ուղիներից ամենահարմարը: Օպտիմալ տարբերակով աշխատանքը ենթադրում է ուսուցչի կողմից գործունեության խնդիրների

առաջադրում, գործունեության խթանում, մանկավարժական ազդեցության իրագործում, պրոցեսի ընթացքի նկատմամբ վերահսկողություն, աշակերտների կողմից՝ գործունեության խնդիրների ընդունում և դրանց ակտիվ իրականացման ձգտում, գործունեության դրդապատճառների գիտակցում, գործունեության ակտիվ իրագործում, պրոցեսի ընթացքի նկատմամբ ինքնավերահսկողություն, իր գործողությունների ինքնակարգավորում և շտկում:

Նախագծերի իրականացման ժամանակ ուսումնական բուն գործունեության նկատմամբ հետաքրքրությունների հիմնական աղբյուրը ամենից առաջ նրա բովանդակությունն է: Նախագծեր իրականացնելիս աշակերտների իմացական գործունեության ակտիվացման ամենաարդ-յունավետ ճանապարհը պրոբլեմային հարցադրումների ճիշտ սահմանումն է:

Ուսուցչի նպատակն է նախագծի իրականացման գործընթացը դարձնել երկխոսություն, որտեղ աշակերտներն ապահովում են հետադարձ կապ, սովորում են գնահատել իրենց յուրաքանչյուր քայլը, տեսության ու կյանքի միջև բացահայտել տարատեսակ կապեր, կիրառել իրենց գիտելիքներն առօրյա կյանքում: Այս ամենին հասնելու համար շատ կարևոր է կիրառել մոտեցումներ, որոնց շնորհիվ աշակերտը կկարողանա դիտարկել, ճիշտ եզրակացություններ անել, կատարել չափումներ, եզրահանգումներ՝ ելնելով ընդհանուր օրինաչափություններից, ճիշտ օգտագործել տեր-միններ, հասկացություններ, տեսնել դրանց դրսևորումները նաև իր շրջապատում, և ամենակարևորը, գիտակցել, որ ուսուցման համար պատասխանատու է նաև ինքը:

Նախագծային ստեղծագործական-հետազոտական մեթոդը կառուցվածքայնորեն ներկայացվում է հետևյալ բաղադրիչներով.

- բացատրագիր կամ ներածություն (նախաբան, թեմայի կարևորության կամ հրատապության մասին հիմնավորում):
- ստեղծագործական աշխատանքի բովանդակությունը (օգտագործված մեթոդիկան)՝ գրավոր նյութի վերլուծությամբ կամ արտադրանքի նկարագրությամբ և ներկայացմամբ, գիտական զեկույցի վերլուծության

համար անհրաժեշտ հաջորդական հարցերով կառուցվածքի հիմնավորմամբ:

- ստեղծագործական նախագծի նախապաշտպանության և արդյունքների (մասնակցություն համաժողովների կամ մրցույթների, հրատարակություններ և այլն) վերաբերյալ նյութեր կամ տվյալներ:

5.ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՈՒՄԸ՝ՈՒՍՈՒՑՉԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հետաքրքիր և բովանդակալից նախագծային աշխատանք իրականացվեց Երևանի Զոն Կիրակոսյանի անվան հ. 20 հիմնական դպրոցի 8-րդ դասարաններում <<Հարավարևմտյան Ասիա>> թեմայի ամփոփման համար՝ <<Հարավարևմտյան Ասիա: Հայաստան, հարևաններ…>> խորագրով: Աշակերտները, ներկայացնելով տարածաշրջանը, անդրադառնալով տարածաշրջանի, մասնավորապես՝ ՀՀ հարևան պետությունների աշխարհագրությանը, պատմությանը, մշակույթին, իրենց ստացած գիտելիքների միջոցով փորձեցին հիմնավորել, թե ինչպես կարելի է ճիշտ կազմակերպել իրադարձությունների ընթացքը տարածաշրջանում, որպեսզի փոխվստահության, փոխգործակցության միջոցով հնարավոր լինի ապահովել տարածաշրջանային խաղաղությունը և հասնել ՀՀ վերելքին:

Նախագծի իրականացման համար գնահատվեցին աշակերտների ռեֆլեկտիվ հմտությունները, հանձնարարություններ տրվեցին որոնողական, հետազոտական աշխատանքներ կատարելու համար, կատարվեց աշխատանքի բաժանում, թիմերի համար նշանակվեցին ավագներ՝ ուսուցչի խորհրդատվությամբ աշխատանքի ընթացքը կառավարելու համար: Որպես աշակերտների համագործակցության արդյունք հանձնարարվեց պատրաստել շնորհանդեսներ և ներկայացնել պետություններն իրենց ստեղծագործական ողջ հնարավորություններով:

Նախագծի ներկայացման ժամանակ կիրառվեց դերային խաղ, որով աշակերտները զարգացրին զբոսաշրջության հնարավորությունների ճիշտ զարգացման արդիականության հարցը տարածաշրջանում և կարևորելով հարևաններին ճանաչելու անհրաժեշտությունը, տեսակետներ հասունացնելով՝ հանգեցին այն մտքին, որ խաղաղությունը բարիք է:

Դերային խաղում ներգրավված կերպարներն իրենց խաղը կառուցեցին պոտենցիալ կոնֆլիկտի շուրջ /այն է՝ ո՞ր երկիրն է առավել հրապուրիչ և հետաքրքիր, հարուստ մշակույթով և պատմությամբ/: Ներկայացրին

Իրանը, Վրաստանը, Ադրբեջանն ու Թուրքիան և տեսակետների բախման արդյունքում, եկան եզրահանգման՝ յուրաքանչյուր պետություն, յուրաքան-չյուր ժողովուրդ հետաքրքիր է յուրովի: Պետք է հարգել յուրաքանչյուր ժողովրդի պատմությունը, ճանաչել ներկան, ձգտել փոխվստահության, զարգացնել հարաբերություններ համագործակ-ցության արդյունքում, ինչի համար կարևոր է խաղաղությունը:Աշակերտները մտովի ճամփորդեցին հարևան երկրնե-րով, կանգ առան պատմաճարտարապետական, մշակութային կոթողնե-րում, գնահատեցին դրանց անխուսափելի ազդեցությունները մարդկային հասարակության գոյության և տարբեր մշակույթների մերձեցման գործում: Նախագիծը ներկայացնելիս բոլորը ստեղծագործաբար կիրառեցին թեմայի վերաբերյալ իրենց ունեցած գիտելիքները: Սեփական երևակայության միջոցով և ստացած գիտելիքների պաշարը կիրառելով՝ այնպիսի հիմնավոր տեսակետներ արտահայտեցին, որոնք հավաստեցին այն փաստը, որ աշակերտակենտրոն մոտեցումներն ապահովում են երեխաների մոտ կարողությունների, հմտությունների և որոշակի արժեհամակարգի ձևավորում: Նախագծի իրականացման առավելությունն այն է, որ ձեռք բերված փորձը կպահպանվի երկար, այն գիտելիքների և հմտությունների ձեռքբերման համեմատաբար հաճելի ձև է: Նախագծի իրականացումը մասնակիցներին հնարավորություն տվեց հասկանալ, թե ինչպես են մարդիկ իրենց կյանքը կազմակերպում տարբեր իրականություններում: Հենց այդ զգացումն էլ կարող է դառնալ ուսման հզոր գործիք և նպաստել այլոց վարքի պատճառները հասկանալու ունա-կության զարգացման:

Հատուկ ուշադրություն հատկացնելով ՀՀ անմիջական հարևաններին՝ աշակերտները ստացան տնտեսագիտական, ազգագրական ու քաղաքական լրացուցիչ գիտելիքներ: Օգտագործելով դրանք՝ ներկայացրին տարածաշրջանին բնորոշ հիմնախնդիրներ: Իրականացված աշխատանքը խթանեց աշակերտների մտածողական և ինքնակրթության հմտությունների զարգացումը:

Նախագծի ներկայացման ընթացքում պահանջվում էր պատկերացում տալ տարատեսակ հասկացությունների մասին, որոնց ընկալումը հաղթահարվեց՝ դիտողական դարձնելով ուսումնասիրման օբյեկտը :Նախագիծը ներկայացվեց զննական և գործնական մեթոդների կիրառմամբ /համակարգիչ, մուլտիմեդիական պարագաներ/: Աշակերտներն ունեին հանդերձներ /տարազներ, երաժշտական գործիքներ և այլն/, ստեղծել էին <<8² COMPANY>> անունով կայք, շնորհանդեսներ և այնքան համոզիչ էին ներկայացնում իրենց աշխատանքը, որ համոզված ենք՝ այդ նախագծային աշխատանքը երբեք չեն մոռանա:Նախագիծն իրականացնելիս բոլոր առարկաներից ստացած գիտելիքները շատ ակնառու էին, տեսանելի էր միջառարկայական կապերի ամբողջությունը աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից ազգային երգ ու պար առարկայից, ինֆորմատիկայից, տեխնոլոգիայից:

Որպես վերջնարդյունք աշակերտները կարողացան նկարագրել և վերլուծել տարածաշրջանը, քարտեզի վրա ցույց տալ տարածաշրջանի սահմանները, պետությունները, բացատրել աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները, գնահատել դիրքը տնտեսության զարգացման տեսանկյունից,բնութագրել բնական պայմաններն ու ռեսուրսներն ընդհանուր գծերով, գնահատել դրանք տնտեսության զարգացման տեսանկյունից,բացատրել տարածաշրջանի տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի առանձնահատկությունները, համադրել տարբեր երկրների տնտեսական ցուցանիշները,ներկայացնել տարածաշրջանի հիմնական հիմնախնդիր-ները, մեկնաբանել դրանց պատճառներն ու հետևանքները,կիրառել տարածաշրջանի ընդհանուր աշխարհագրական, թեմատիկ քարտեզները՝ աշխարհագրական տեղեկույթի ստացման և օգտագործման նպատակներով,դիրքորոշում ունենալ տարածաշրջանի քաղաքակրթական և մշակութային

արժեքների վերաբերյալ, ձևավորել կարծիք էթնոմշակութային և այլ առանձնահատկությունների վերաբերյալ:

Նախագծային ուսուցումը կարող է հենքային դառնալ ողջ ուսումնական գործընթացի համար: Այն ունի ակնհայտ առավելություններ՝ ապահովվեց պատճառահետևանքային կապերի բացահայտումը, հնարավորություն ստեղծվեց ներկայացնել երևույթները տարածության և ժամանակի մեջ, ձևավորվեց աշխարհագրական մտածողություն: Ճիշտ է, ուսուցման մեթոդները սերտ կապված են ուսումնասիրվելիք նյութի բովանդակության հետ, բայց մեթոդի ճիշտ ընտրությունն ապահովում է գիտելիքների ճշմարիտ, առանց աղավաղումների մտապահումը, տրամաբանական և աշխարհագրական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Նախագծի իրականացումը կարևոր է անհատի ձևավորման և զարգացման գործընթացում ինքնաճանաչման համար: Նախագծի մասնակիցների մոտ ձևավորվեց շրջապատող իրականության նրբերանգները նկատելու, անհատական և խմբային աշխատանքների արդյունքները համադրելու, գիտական տեքստերն օգտագործելու կարողություններ: Բարձրացվեց թվային տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը ուսումնահետազոտական աշխատանքներում, զարգացվեց ու հարստացավ բանավոր և գրավոր խոսքը: Այս նախագծով աշակերտները ձեռք բերեցին հայրենագիտական և էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններին մասնակցելու հմտություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագծային ուսուցումը նպաստում է յուրաքանչյուր մասնակցի ինքնավստահության բարձրացմանը, թույլ է տալիս յուրաքանչյուր աշակերտին գնահատել և զարգաց¬նել հնա¬րա¬վորությունները, ձեռք բերել այնպիսի հիմնական սոցիալական հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցությունը և համագործակցությունը: Նախագծային ուսուցումը երեխայի մեջ զարգացնում է քննադատական մտածողություն, խնդրների լուծման ուղիներ փնտրելու ունակություն, հետազոտական հմտություններ (խնդիրների բացահայտում, տեղեկատվության հավաքում և այլն), դատողությունների, հիպոթեզավորման, ընդհանրացման, վերլուծական մտածողության զարգացման ունակություններ:

Նախագծի թեմայի ուսումնասիրումը նպաստում է աշակերտների ճանաչողական ունակությունների զարգացմանը և ճանաչողական գործունեության մեջ նրանց անկախությանը, առարկայի /այս դեպքում՝ աշխարհագրության/ նկատմամբ աշակերտների հետաքրքրության զարգացմանը, սովորելու մոտիվացիայի բարձրացմանը և մտահորիզոնի ընդլայնմանը:

Այսօր բովանդակային գիտելիքը և հասկացություններ հասկանալն ինքնին բավարար չեն: Մարդիկ պետք է կարողանան քննադատաբար մտածել, խնդիրներ լուծել, դրսևորել իրենց թիմային աշխատանքում: Եվ հենց 21-րդ դարի այս կարողություններն են հաղիսանում հաջողության գրավական, որոնք կարելի է սովորեցնել ոչ միայն բովանդակային գիտելիքի ձեռքբերման միջոցով, այլ քննադատաբար մտածողություն ձևավորելով: Եվ բոլոր ուսումնական նախագծերը պետք է կենտրոնանան հաջողության հետևյալ կարողությունների վրա՝ քննադատական մտածողություն, խնդիրների լուծում, համագործակցություն և ինքնակառավարում:Մեծ ոգևորությամբ երեխան կատարում է միայն այն գործողությունները, որոնք նա ազատորեն ընտրում է:

<<ՆԵՐԳՐԱՎԵ՛Ք ԻՆՁ, ԵՎ ԵՍ ԿՍՈՎՈՐԵՄ>>…

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար / Բնօրինակի անվանումը՝ Reference Framework of Competences for Democratic Culture – Volume 3 (ISBN 978-92-871-8575-4) (Եռահատոր շարք)՝ Եվրոպայի խորհրդի հրատարակչություն,165 էջ,

էջ 6-7/

2.Հանրակրթության պետական չափորոշիչ-Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ https://www.arlis.am/images/ARLIS/

3.Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները ՀՀ 2015թ. փոփոխություններով սահմանադրության համատեքստում, Ա. Վաղարշյան՝ Կրթության իրավունքի սահմանադրական և օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները Երևան,Իրավունք 2016,էջ 22

4.Ջոն Լարմեն «Gold Standard PBL: Essential Project Design Elements, Buck Institute for Education 2015, 4pages ,p.2

5.Современные педагогические и информационные технологии в системе образования: Учебное пособие / Е. С. Полат , М. Ю. Бухаркина, — М.: Издательский центр «Академия», 2010, 17с ., стр.14

6. Kilpatric W.H. `THE PROJECT METHOD Eleventh Impression March, 1929, Copyright 1918, by TEACHERS COLLEGE, COLUMBIA UNIVERSITY,17 pages,p.5